Բշի (25 Սեպտ.). քշեցին զմանզուլ եղած զազիէսքէրքն։

Գշի (26 Սեպտ.). վէզիրի լեզուն կապեցաւ ի տամլայէ և հիւանդ էր։

Շաբաթի օր (30 Սեպտ.) զՏէր Ոսկանն բերին իշխանք եկեղեցոյս ի մեր ժամն։

Հոկտեմբերի օր Կիրակի ամիս. տօն Վարագայ Սուրբ Խաչի։

Բշի օրս (2 Հոկտ.) ելաք ի տանէն վասն շինութեան և օրս սկսան քակել։

Դ–իս՝ օր Դշիս. հիմնարկեցաւ տուն մեր և օրս առաջի ձայն էր։

Ը–իս՝ օր Կիրակի։

Եշի օրս ԺԲ–իս ամսոյ՝ պայրամ արարին Տաճկունքն՝ Հաճիլար։

ԺԵ–իս օր Կիրակի. Մղտեսին մեր ի Ղալաթա գնաց սան առնել։

ԺԸ–իս օր Դշի. մանզուլ արարին զՏէվրիշ Մուհամէտ փաշան և եդին ղայմախամ զՄէլէկ Ահմէտ փաշան և ուղարկեցին զմօհրն ի Շամ առ Իփշիրն՝ վէզիրութեան, զի այս արհեստիւս բերցեն զնա ի ներքս։

ԻԲ–իս օր Կիրակի. մեր Խոճա Աստուածատուրի աղբար Թօրոսը կարգվեցաւ։

ԻԶ–իս օր Եշի. Ղասուում ասի ըստ բառի տաճկի։

Շաբաթ օրս (28 Հոկտ.) տօնանման եկաւ։

Նոյեմբեր ամիս օր Դշի։ Օրս Զաւտար եպիսկոպոսն ի մեր ժամն եկաւ։

Եւ Կիրակիս (5 Նոյ.) ժողովք արար վասն իւր. և օրս էր հարսնիք Կիրակոսին։

Այգուցն (6 Նոյ.) տարեալ զնա պսակեցաք ի յԱստուածածին։